Հավելված N 12
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.11-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների համակարգումը և իրականացումը,

2) ապահովում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքների համակարգումը և իրականացումը,

3) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Կոլեգիայում և Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

4) ապահովում է Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական տնտեսական Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

5) ապահովում է Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասով ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումները կազմակերպումը՝ ձևավորելով և ներկայացնելով հայկական կողմի դիրքորոշումը,

6) ապահովում է եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ միջոցառումների մշակումը և իրականացումը

7) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակումը և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցումը,

8) ապահովում է ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության իրականացումը,

9) ապահովում է սակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտում զգայուն ապրանքների ցանկի և վերջինիս ուղղությամբ մաքսատուրքի դրույքաչափերի կամ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման առնչությամբ համապատասխան իրավական ակտերի մշակումը և վարում բանակցություններ ԵԱՏՄ անդամ պետությունների հետ,

10) ապահովում է երրորդ երկրներից ՀՀ ներմուծման և արտահանման քվոտավորման մեխանիզմի ներդրման աշխատանքների իրականացումը,

11) ապահովում է կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում մի շարք ապրանքատեսակների մասով արտոնյալ դրույքաչափերի կիրառման ընթացակարգերի մշակումը,

12) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի, հուշագրերի և դրանցից բխող միջոցառումների մշակումը և իրականացումը,

13) ապահովում է երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի նախագծերում ընդգրկված յուրաքանչյուր բաժնի մասով /համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ/ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպումը,

14) ապահովում է ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագրերի բանակցային փուլերին մասնակցությունը և վերջիններիս ընթացքում բարձրացված հարցերի մասով հայկական կողմի դիրքորոշման ներկայացումը,

15) ապահովում է ՀՀ համար զգայուն, ինչպես նաև արտահանման մեծ ներուժ ունեցող ապրանքների ցանկերի մշակման աշխատանքների իրականացումը՝ ելնելով երրորդ երկրների շուկաների առանձնահատկություններից,

16) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականության իրականացումը,

17) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ներքին շուկայի գործառնության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

18) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրի վարումը, ինչպես նաև նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզի ձևավորումը,

19) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ գործունեությունից սպառողների իրավունքների պաշտպանության հավասար պայմանների ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

20) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում նավթի և նավթամթերքի միասնական շուկայի ձևավորման աշխատանքների իրականացումը և համակարգումը,

21) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ալկոհոլային միասնական շուկայի ձևավորման աշխատանքների իրականացումը և համակարգումը,

22) ապահովում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում թվային առևտրի ներդրման և իրականացման աշխատանքների համակարգումը,

23) ապահովում է էլեկտրոնային առևտրի կիրառման առնչությամբ համապատասխան իրավական ակտերի մշակումը և դրանից բխող միջոցառումների իրականացումը,

24) ապահովում է արտաքին առևտրի քաղաքականության մշակումը և դրա դիտանցման իրականացումը,

25) ապահովում է արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, նրանց շահերը ներկայացնող միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքների իրականացումը,

26) ապահովում է թիրախային շուկաներ արտահանվող առանձին ապրանքատեսակների մասով հայրենական արտահանողների տեղեկացվածությունը,

27) ապահովում է Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ հուշաթերթիկների մշակումը և տեղեկատվական ամբողջական հասանելիությունը,

28) ապահովում է արտաքին շուկաների ուսումնասիրությունը ու վերլուծությունը և ներկայացնում առաջարկություններ տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,

29) ապահովում է առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի /GSP/ /GSP+/ կիրառման հետ կապված միջոցառումների իրականացումը,

30) ապահովում է ապրանքների ծագման երկիրը որոշման միասնական քաղաքականության իրականացումը,

31) ապահովում է օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների հետ

առևտրատնտեսական համագործակցության աշխատանքներին մասնակցությունը,
32) ապահովում է արտաքին առևտրի կարգավորման ոլորտում «պետություն-մասնավոր հատված» համագործակցության միջոցառումների մշակումը և իրականացումը,
33) ապահովում է ԱՊՀ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների մշակումը և իրականացումը,
34) ապահովում է ԱՊՀ համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության մրցունակ ապրանքների ցանկի մշակումը և տրամադրումը,
35) ապահովում է ԱՊՀ համագործակցության շրջանակներում արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշների տրամադրումը:

Իրավունքները՝

- պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ, կարծիքներ և այլ փաստաթղթեր
- պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն
- կազմակերպել համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկումներ
- պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել ամբողջական տեղեկատվություն և նյութեր
- կազմակերպել համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ
- ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ
- պահանջել համապատասխան տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներից ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ կարծիքներ և այլ փաստաթղթեր
- պահանջել համապատասխան տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներից ներկայացնել ամբողջական տեղեկատվություն և նյութեր:

Պարտականությունները՝

- Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների համակարգման և իրականացման նպատակով, համապատասխան մարմիններից ներկայացված անհրաժեշտ հիմնավորումների, կարծիքների և այլ տեղեկատվության հիման վրա ձևավորել համապատասխան դիրքորոշում և ներկայացնել եզրակացություն
- ներկայացնել հայկական կողմի դիրքորոշումը Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Կոլեգիայում, Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդում, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական տնտեսական Միջկառավարական խորհրդի նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ,

• մշակել և իրականացել եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ միջոցառումները

• Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված՝ որոշ ապրանքատեսակների մասով մաքսատուրքերի բարձրացման, նվազեցման կամ զրոյականացման, ինչպես նաև որոշ ապրանքատեսակների մասով դասակարգման հետ կապված միջոցառումների իրականացման, թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման ընթացակարգերի մշակման նպատակով՝ կատարել վերլուծություններ ապրանքների արտադրության, ներմուծման և արտահանման ծավալների մասով, ինչպես նաև ներկայացնել ազդեցության գնահատում ՀՀ բյուջեի վրա,

• կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում կատարել համապատասխան շուկաների մասով ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ հայրենական ապրանքների մրցունակությունը և ներկայացվածությունը ապահովելու ուղղությամբ,

• առևտրային քաղաքականության մշակման և վարման նպատակով իրականացնել համապատասխան միջոցառումներ, մասնավորապես՝ նախապատրաստել վերլուծություններ, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ,

• իրականացնել աշխատանքներ ներքին շուկայի գործառնության շրջանակներում փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտման և վերացման ուղղությամբ, ինչպես նաև ապհովել երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրի վարումը,

• Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում միասնական շուկայի ձևավորման աշխատանքների պատշաճ իրականացման նպատակով կազմակերպել քննարկումներ համապատասխան պետական կառավարման մարմինների հետ և ձևավորել միասնական դիրքորոշում:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում

4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
8. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակեպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: